# Դաս 7. Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ մայրաքաղաքներ, բերդեր և ամրոցներ, եկեղեցիներ

- *Հալիձորի բերդը շատ անառիկ ամրոց է եղել, որտեղ ժամանակին պատսպարվել էր Դավիթ Բեկը։ Պարսից շահի զորքերը ինչքան կռվում են, չեն կարողանում գրավել բերդը։ Շուն-Ֆրանգյուլը պարսիկներին հայտնում է գետնի տակով անցնող ջրի ճանապարհի մասին։ Թշնամին գնում, կտրում է ջուրը։ Պաշարվածները ծարավից թուլանում են։ Մի գիշեր էլ նրանք գաղտնի ճանապարհով դուրս են գալիս բերդից, իսկ Պարսից շահը հարձակվելով՝ գրավում է դատարկ բերդը։*